ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» հունիսի 2026 թ. N 90-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 84-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «ԻՆՍՏՐՈՒԿՏԱՐԻՈՒՄ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերության 2026 թվականի հունիսի 16-ի N INS083-26 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունիսի 8-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 84-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի օգոստոսի 21-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 129-Ա հրամանի հավելվածը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

5	Հունիսի 23-24	16.30-21.30	«ISO 14001 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց, քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները» վերապատրաստման դասընթաց	Բիլյան Ծովինար	«Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5	10 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34 մասնագիտություններ	40.000 դրամ

»;

2) 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1 Հաստատել «ISO 14001 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց, քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6/19/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2026 թվականի հունիսի 19 -ի N 90 -Ա հրամանի

«ISO 14001 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց, քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները»

միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
5	Հունիսի 23-24	16.30-21.30	«ISO 14001 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց, քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման	Բիլյան Ծովինար	«Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5	10 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34 մասնագիտություններ	40.000 դրամ

			առանձնահատկությունները» վերապատրաստման դասընթաց					